

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Ճարտարապետական
դիտուրյունների ղոցենու)

ԹՈՐԱՍ ԹՈՐԱՍԱՆՑԱՆ

(Թագմավաստակ հետազոտողի հիշատակին. մահվան 25-ամյակի առթիվ)

1934 թվականի մարտի 1-ին ընդմիշտ հեռացավ իր ժողովրդից հայ մշակույթի խոչորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Թորոս Թորամանյանը: Նա հեռացավ կյանքից վաստակած, թողնելով սերունդներին պահի քան երեսուն տարիների իր տքնաշան աշխատանքի հարուստ պտուղները, մի անգահատելի գիտական ժառանգություն, որով հանդիսացավ պատմական հայ ճարտարապետության ուսումնասիրության ամուր հիմնաքարը: Այնքան է մերկել Թորամանյանի անունը հայ ճարտարապետության հետ, որ երբ ասում ենք Թորամանյան, հասկանում ենք հայ ճարտարապետություն, կամ ասում հայ ճարտարապետություն, իսկուն մտարելում ենք նրա իսկական հանրագիտարան՝ Թորոս Թորամանյանին: Այս թե ինչու և միանգամայն իրավացի էր մեր սիրելի Վարպետ Ավետիք հասհակյանը, երբ ասում էր. «Նա մեր հոյակապ ավերակների ու հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն էր»:

Անիում և Շիրակի այլ մասերում, Արագած լեռան փեշերին թե Արարատյան դաշտավայրում հայ ճարտարապետության անխոնց հետապոտողը անցնում էր հուշարձանից հուշարձան, ավերակից ավերակ, լուսանկարում, շափագորում և ուսումնասիրում էր, կուտակելով հսկայական գիտական նյութ, որի մանրակրկիտ և ուշադիր քննումը հնարակորություն տվեց նրան անսասան բնորոշումներ ձեսկերպել հայ ճարտարապետության կազմավորման, զարգացման ու սկզբունքների մասին: Այդ նյութերը հիմք ծառայեցին ոչ միայն իրեն բաղմաթիվ հե-

տազոտությունների համար, այլև այնպիսի նշանավոր եվրոպացի գիտնականների, ինչպիսին Հովսեփ Ստրժիկովսկին էր, որը հիմնը ըմբելով Թորամանյանի գիտական հարուստ նյութերի ու ընդհանրացումների վրա, հրատարակեց նշանավոր «Die Bausenst de Armenier und Europe» երկհատոր մեծածավակալ աշխատությունը:

Այսպիսով, ինչպես Կոմիտասը հավաքելով ու մշակելով գեղջկական երգերը, կարողաց քաղաքակերթ աշխարհին ներկայացնել հայկական երաժշտությունը, այնպես էլ Թորամանյանը կարողացավ գիտական աշխարհին ներկայացնել հայ ժողովրդի բազմադարյան ժառանգության հարուստ գանձարաններից մեկը՝ ճարտարապետությունը:

Թ. Թորամանյանը ծնվել է 1864 թվականին Թուրքիայի Շապին-Գարահիսար գյուղում: Իր կրթությունը նա ստացել է Կոստանդնովուսում 1893 թվականին, ավարտելով Գեղարվեստից ճեմարանի ճարտարապետական բաժանմունքը, Մինչև 1900 թվականը աշխատել է Կոստանդնովուսում և Բոլղարիայի մի շաբաթ քաղաքներում: Այնուհետև, նպատակ ունենալով զրադակել հետազոտական աշխատանքով, նա ձեռնարկում է ճանապարհորդությունների ճարտարապետության դասական երկներում, Փարիզում ունկնդրություն է ճարտարապետության գասական երկներում, Փարիզում ունկնդրություն է ճարտարապետության գասական երկներում, Փարիզում է ճարտարապետության գասական երկներում, Փարիզում է ճարտարապետության գասական երկներում:

1903 թվականին բանասեր Կարապետ Բասմաճյանի հետ Փարիզից Հայաստան գալով, Թորամանյանը որոշում է մնալ այ-

տեղ և իր ուժեղը նվիրաբերել հայ ճարտարապետության ուսումնասիրությանը: «Ալիստեցի մնալ այնտեղ, — գրում է նա, — աշխատել, տեսնել... մեր ժողովրդի հանձարեղ շնաշխարհիկ բեկորները փատակներու և գերեզմանական տիսուր հողակույտերուն տակեն ազատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին»:

Զուրկ լինելով նյութական և բարոյական օժանդակությունից, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, Թորամանյանը ձեռնարկում է մի բեղմնավոր ու շնորհակալ աշխատանք, որը շատ տարիներ հետո է միայն նրան հանրահայտ դարձնում ու գնահատանքի արժանացնում:

Առաջին հետազոտական աշխատանքները սկսեց նա Անիում, որ դաժան պայմաններում անցկացրեց ձմռան ամիսները: Հիշելով այդ մասին, նշանավոր հայագետ պրոֆ. Ն. Մարոք գրում էր. «Ապրելով ցուրտ, շտաքացվող և մինչև ծնկները անձրսաշրով լցված սենյակում, Թորոս Թորամանյանը հասավ ծայրահել աղքատության, նա օրերով սովոր էր մատնված, ծածկված էր ցնցոտիներով»:

1904 թվականի գարնանը Թորամանյանը եցմիածին է գալիս, հույս ունենալով օգնություն ստանալ իր կարեսը գործն առաջ տանելու համար: Սակայն արժանանալով անտարբեր վերաբերմունքի, խիստ վշտանում է գիտության մշակը:

Այդ ժամանակ Խաչիկ վարդապետ Դատյանը, որ մի քանի տարի առաջ ձեռնարկել էր Զվարթնոցի պեղումները, իմանալով, որ Թորամանյանը ճարտարապետ է, հրավիրում է նրան մասնակից լինելու պեղումներին և կազմելու բացված տաճարի հատակագիծը: Թորամանյանի մասնակցությունը Զվարթնոցի պեղումներին ճակատագրական նշանակություն է ունենում այս հուշարձանի համար: «...Եթե ես պատահաբար վրա չհասնեմ, և սա կանոնի շետևեի յուրաքանչյուր բեկորի ընկած տեղին, դիրքին և շափերին, — գրում է Թորամանյանը, — և մնար Խաչիկ վարդապետի հասկացողության և ամեն ինչ ոչնչացնելու ուղղությամբ տարվեին մնացած պեղումները, պարզապես պետք է միանգամայն կորած լիներ Զվարթնոցի ընդհանուր կառուցվածքն ու ներքին և արտաքին ձևերը»:

Անվանի գիտնականի Զվարթնոցում կատարած բեղմնավոր աշխատանքի փայլուն պսակը հանդիսացավ տաճարի վերակազմության նախագիծը: Թեև եղան ուսաւար մասնագետներ, որոնք ցանկացան հերքել տաճարի վերակազմությունը, սակայն ստիպված եղան համոզվել այն անհերքելի փաստերի շնորհիվ, որ նրանց ներկայացրեց Թորո-

մանյանը: Մնացած թերահավատներն ել հրաժարվեցին իրենց դիրքերից, երբ երկու տարի հետո Անիում Զվարթնոցի օրինակով կառուցված Դագկաշին տաճարի պեղումների ժամանակ գտնվեց Դագիկ թագավորի արձանը իր կառուցած եկեղեցու մողելի հետ: Մողելում եկեղեցին եռահարկ էր, ինչպես առաջուց իր վերակազմության մեջ ցույց էր




ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԸ ԱՆԻՊԻՄ

տվել Թորամանյանը: Այս հանգամանքը դգալիքը բարձրացնում է նրա հեղինակությունը գիտական աշխարհում, ճանաշել տալիս որպես հայկական ճարտարապետության լավագույն գիտակ:

1904—1912 թվականներին նա մասնակցում է Անիի պրոֆ. Ն. Մարօք կողմից գրեխավորվող հնագիտական արշավախմբերի աշխատանքներին: Այդ տարիների ընթացքում Թորամանյանը մանրակրկիտ ուսումնասիրության ննթարկեց Անիի ինչպես եկեղեցական, այնպես էլ քաղաքացիական ճարտարապետության շատ հուշարձաններ, կազմեց նրանց չափագրությունները և վերակազմության նախադերը: Դրանցից կա-

րելի է հիշատակել Մայր Տաճարը, Փրկչի, Արուղամբենց, Առաքելոց և այլ եկեղեցիները: Առանձին վարպետությամբ են իրականացված հատկապես Գագկաշեն և Բախտաբեկի եկեղեցիների, Անիի հյուրանոցի և Ախուրյանի վրա կառուցված կամուրջի վերակազմությունները: Չսահմանափակելով Բագրատոնյաց հոյակապ մայրաքաղաքի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությամբ, նա իր հետազոտության շրջանակներն ընդարձակեց, ընդգրկելով ողջ Երակի բարձրավանդակի, Արագածոտնի և Սրբարտավանի աշտավայրի հուշարձանները:


Սկսած 1905 թվականից Թորամանյանը պարբերական մամուռում հանդես է գալիս բազմաթիվ նամակներով ու հողվածներով, Հայրենի երկրի հնությունների վերաբերյալ Հետաքրքրական են նրա «Նամակներ Անիից» հոդվածաշարքը, «Զվարթնոցի եկեղեցին» և «Էջմիածնի Տաճարը» հետազոտությունները: Ավելի ուշ, 1911 թվականին նա հրատարակում է «Տեկորի տաճարը» նշանավոր մենագրությունը, որի մեջ ոյ



ԶՎԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ (Զափագրուրյան Թ. Թորամանյանի)

միայն հանգամանորեն քննում է այս հուշարձանի ճարտարապետությունն ու կրած փոփոխությունները, այլև շարադրում հայ ճարտարապետության կազմավորման մի շարք սկզբունքային հարցեր: Հանդես գալով հայ ճարտարապետության զնահատման հարցում եվրոպական մի շարք գիտնականների սխալ կարծիքների քննադատությամբ, Թորամանյանը բազմաթիվ փաստերով հիմնավորում է հայկական ճարտարապետության ինքնուրույնությունը, ցուց է տալիս, որ այն ոչ թե հանդիսանում է բյուզանդական ճարտարապետության մի ճյուղը, ինչպես շանում էին ապացուցել դեպի փոքր ազգությունների ստեղծած մշակույթի նկատմամբ արհամարհական վերաբերմունք ունեցող եվրոպական մի քանի գիտնականներ, այլ արգասիք է հայ ժողովրդի բազմադարյան շինարարական գործունեության և տաղանդավոր ճարտարապետների ստեղծագործական մտքի: Դրա հետ միասին Թորամանյանը հայ ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերը չէր քննում մեկուսացված: Նա ցուց էր տալիս նաև այն փոխազդեցությունները, որոնք տեղի ունեին ժողովրդի պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

Խիստ բարենպաստ նշանակություն ունեցավ Թորամանյանի համար նրա գործունեությունը պրոֆ. Ն. Մարի հետ «...որուն հովանավորության տակ,— ինչպես նշում է




ԶՎԱՐԹՆՈՑ ԵԿԵՂԵՑԻ
(Վերակազմուրյան Թ. Թորամանյանի)

ինքը, — խաղաղ և ապահով կատարեցի ու
միայն ինձի, այլև համայն գիտական աշ-
խարհի համար շահեկան մի մեծ գործ»:

Պրոֆ. Ն. Մառը բարձր գնահատելով Թո-
րամանյանի արժանիքները, ստեղծեց Հնա-
րավոր բարենպաստ պայմանները նրա աշ-
խատանքի համար, հովանավորեց նրան
նյութապես և բարոյապես: Դրա հետ միա-
սին նա ներկայացրեց Թորամանյանին ոռու-
սական գիտական շրջաններին, Գիտություն-
ների կայսերական ակադեմիայում քըն-
նարկման դնելով Անիում կատարած նրա
շափագրություններն ու վերակազմություն-
ները, ինչպես և հայերենից անձամբ ոռաե-
րեն թարգմանելով ու հրատարակելով «Էջ-
միածնի տաճարի հնագույն ձևերը» ուսում-
նասիրությունը:

Հայաստանում Սովետական կարգեր հաս-
տատվելուց հետո, Թորամանյանը մեծ հ-
ռանդրվ մասնակցեց Հայ ժողովրդի նվիրա-
կան հուշարձանների պահպանության և ու-
սումնասիրության աշխատանքին: Նրա, ժո-
ղովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի,
ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի և




ԱՆԻՒ ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՏԱԿԱԳԻՐԸ
(Զափագրուրյան Բ. Թորամանյանի)

ուրիշների նախաձեռնությամբ կազմակերպ-
վեա երիտասարդ ուսուուրիկայի Հուշար-
ձանների պահպանության կոմիտեն, որի
անդամն էր նա և բոլոր միջոցառումների
գործուն մասնակցը: Հանդիսանալով Հա-
յաստանի Պատմության և արվեստի ինստի-
տուտի գիտական աշխատակիցը, Թորաման-
յանը, շնայած իր ալեսոր հասակին, զլիա-
վորեց Հնագիտական պեղումները հին Վա-
ղարշապատում և Գեղարդաձորում: Նա մեծ
շանքեր ու գիտելիքներ գործադրեց Հայա-
տանի Պետական թանգարանի ճարտարա-
պետական բաժնի կազմակերման համար:

Թորամանյանն ապրեց իր ժողովրդի ա-
զատագրման երջանկությունն ու վայելից
նրա անսահման հոգատարությունը, ստա-
ցավ հետազոտական աշխատանքներ կա-
տարելու լայն հնարավորություններ Կյան-
քի վերջին տարիների ընթացքում նա մեծ
շանափրությամբ աշխատում էր հրատարա-
կության պատրաստել իր «Նյութեր Հայ
ճարտարապետության պատմության» մե-
ծածավալ գիրքը, որի մեջ պիտի ամփոփվեին
իր 30-ամյա հետազոտական աշխատանքնե-
րի արդյունքները: Սակայն այդ գրքի հա-
մար գրված մի քանի զույները այդպես էլ
շամբուղացվեցին, կիսատ մնացին: Սանր
հիվանդության հետևանքով գամված ան-
կողնին, նա ապրում էր իր փայտայած ու-
սումնասիրության ավարտման տեհնով, որը
այդպես էլ նրան շվիճակվեց հրատարակված
տեսնել:

Հիվանդության ընթացքը գնալով այնքան
բարդացաւ, որ երր 1934 թվականի



ԱՆԻՒ ՀՈՎՎԻ ԵԿԵՂԵՑԻ
(Վերակազմուրյան Բ. Թորամանյանի)

փետրվարին, մահվանից առաջ, նշվում էր նրա գիտա-հետազոտական գործունեության 30-ամյակը, Թորամանյանը հնարավորություն չունեցավ մասնակցելու իր մեծարման հրեկոյին։ Հայաստանի կառավարությունը, բարձր գնահատելով անխոնջ գիտնականի ծառայությունները հայկական ճարտարապետության ուսումնասիրության ասպարեզում, շնորհեց նրան գիտության վաստակվոր գործչի պատվավոր կոչումը։

Նրա մահվանից հետո, 1942 թվականին, լուս տեսան «Նյութեր Հայ ճարտարապետության պատմության» գրքի առաջին, իսկ 1948 թվականին նաև երկրորդ հատորը, որոնց մեջ ի մի են հավաքված նախասովետական և սովետական շրջաններում բազմաթիվ պարբերականներում հրատարակված

նրա հոդվածները, առանձին գրքերը և անտիպ աշխատությունները։ Երկհատոր այդ ստվար ժողովածուի հրատարակումը հանդիսացավ Թորամանյանի պայծառ հիշատակի լավագույն հավերժացումը, միևնույն ժամանակ խոշոր շափով նպաստեց Հայ ճարտարապետության պատմության հետագա ուսումնասիրության գործին։

Վերջին տարիների ընթացքում լուս են տեսել բազմաթիվ նոր ուսումնասիրություններ՝ նվիրված Հայ ճարտարապետության պատմությանը, որոնք հիմնականում խարբս-խըզելով բազմավաստակ հետազոտողի գիտական հարուստ ժառանգության վրա, շարունակում են այն նվիրական գործը, որին անպայման ազնիվ կերպով ծառայեց իր ամբողջ կյանքում ճարտարապետ Թորոս Թորամանյանը։

